ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 13-րդ փողոցն (զուգահեռ է Սիլիկյան թաղամասի 12-րդ փողոցին) անվանակոչել հայ կոմպոզիտոր Էդուարդ Բաղդասարյանի անվամբ՝ «Էդուարդ Բաղդասարյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐԵՎԻԿ ԲԼԵՋՅԱՆՑ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՏԱԹԵՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էդուարդ Բաղդասարյանը ծնվել է Երևանում: Միջնակարգ կրթությունն ստացել է Թբիլիսիում, ավարտել 1940 թվականին: Միաժամանակ սովորել է երաժշտական տասնամյակում: 1941 թվականին ընդունվել է Թբիլիսիի պետական կոնսերվատորիան, իսկ 1946 թվականին տեղափոխվել է Երևան, ուսումը շարունակել Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որն ավարտել է 1950 թվականին: 1951-1953 թթ. սովորել է Մոսկվայում, հայկական մշակույթի տանը: 1956-1966 թթ ղեկավարել է ՀԽՍՀ ռադիո և հեռուստատեսության գործիքային կվինտետը, 1961-1987 թթ. դասավանդել է Երևանի պետական կոնսերվատորիայում, 1982 թվականից որպես պրոֆեսոր: Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում եղել է ստեղծագործական դասարանի ղեկավար:
Գրել է սիմֆոնիկ պոեմ (1950), նախերգանք սիմֆոնիկ նվագախմբի համար (1953), «Շախմատ» բալետը (1940), ռապսոդիա ջութակի և նվագախմբի համար (1958), դաշնամուրի կոնցերտ (1978), դաշնամուրային 24 պրելյուդ (1948-1960), կվինտետ (1952), երգեր, ռոմաններ, թատերական և կինոերաժշտություն, կատարել հայկական ժողովրդական պարերի դաշնամուրային մշակումներ (1976):
«Տժվժիկ» և «Եռանկյունի» ֆիլմերում օգտագործվել է նրա երաժշտությունը:
Էդուարդ Բաղդասարյանը մահացել է 1987 թվականի նոյեմբերի 5-ին:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 13-րդ փողոցն անվանակոչել հայ կոմպոզիտոր Էդուարդ Բաղդասարյանի անվամբ՝ «Էդուարդ Բաղդասարյան փողոց»:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության

կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐԵՎԻԿ ԲԼԵՋՅԱՆՑ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՏԱԹԵՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ